ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-8/7-1»

ք. Երևան 29 -ը նոյեմբերի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից **«Կոմպյուտր Սերվիս» ՍՊԸ**-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ի. Անդրեասյան**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ***32,814,050 (երեսուներկու միլիոն ութ հարյուր տասնչորս հազար հիսուն)*** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Սույն պայմանագրի գնման ժամանակացույցի (հավելված N2) 12, 13, 14, 15, 16, 17-րդ անվանատողերով նախատեսված ապրանքատեսակները հանդիսանում են հիմնական միջոց, որոնց համար երաշխիքային ժամկետ են սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ աշխատակազմը:**

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան. Սարյան 10. 1 և 2 տարածք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ,
Հ/Հ 900011144079	Հ/Հ 217 001-188861-001
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 02508699
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-8/7-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1.	Տոներ սև 006R01646 K	Տոներ քարթրիջ սև/ Xerox Versant 80 Black Toner Cartridge 006R01646 : Նախատեսված է Xerox Versant 80 գունավոր պատճենահանման մեքենայի համար
2.	Տոներ կապույտ 006R01647 C	Տոներ քարթրիջ կապույտ/ Xerox Versant 80 Cyan Toner Cartridge 006R01647 : Նախատեսված է Xerox Versant 80 գունավոր պատճենահանման մեքենայի համար
3.	Տոներ կարմիր 006R01648 M	Տոներ քարթրիջ կարմիր/Xerox Versant 80 Magenta Toner Cartridge 006R01648 : Նախատեսված է Xerox Versant 80 գունավոր պատճենահանման մեքենայի համար
4.	Տոներ դեղին 006R01649 Y	Տոներ քարթրիջ կարմիր/Xerox Versant 80 Yellow Toner Cartridge 006R01649 :Նախատեսված է Xerox Versant 80 գունավոր պատճենահանման մեքենայի համար
5.	Թմբուկ 013R00674 Drum Module	Թմբուկ Xerox Versant 80 Drum Cartridge 013R00674: Նախատեսված է Xerox Versant 80 գունավոր պատճենահանման մեքենայի համար
6.	Օգտագործված փոշու տարա 008R12990	Օգտագործված փոշու տարա Xerox Waste Toner Container 008R12990 : Նախատեսված է Xerox Versant 80 գունավոր պատճենահանման մեքենայի համար
7.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT BELT KIT 675K72180	DC252պատճենանման մեքենայի պահեստամաս IBT BELT KIT 675K72181/ թույլատրելի այլընտրանքային արտիկուլ/: Նախատեսված է Xerox DC252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: *Հնարավոր այլընտրանքային արտիկուլներ՝ սահմանված արտադրողի կողմից, 675K72180, 675K67691, 675K67690, 675K72181*
8.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս 1ST BTR ROLL 059K32492	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս 1ST BTR ROLL 059K32492 : Նախատեսված է Xerox DC252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: *Հնարավոր այլընտրանքային արտիկուլներ՝ սահմանված արտադրողի կողմից, 059K32491, 059K79200*
9.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT ASSEMBLY 042K92759	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT ASSEMBLY 042K92759 : Նախատեսված է Xerox DC252 գունավոր պատճենահանման մեքենայի համար: *Հնարավոր այլընտրանքային արտիկուլներ՝ սահմանված արտադրողի կողմից 042K94730, 641S00661*
10.	Տոներ WC 5890C 006R01551	Տոներ Xerox WC 5865i/5875i/5890i (ներառում է օգտագործված փոշու տարա)/ 006R01552 Նախատեսված է Xerox WC 5890C պատճենահանման մեքենայի համար
11.	Ֆյուզերի հանգույց (DC 252) 008R12989	Ֆյուզերի հանգույց Xerox DC 252 008R12989: Նախատեսված է Xerox DC252 գունավոր պատճենահանման մեքենայի համար
12.	Գունավոր պատ. Սարք/ Xerox Versant 80 լրակազմով/	Xerox Versant 80 գունավոր տպող, սկանավորող, պատճենահանող մեքենա, EFI CONTROLLER, DADF 250 թ./ դուպլեկս/ EFI Fiery 3,1 GHz/ 2 GB/ 500 GB/, կետայնությունը 2400x2400 dpi VCEL ROS, TTA 2 Tray Dual Oversize High Capacity Feeder 497K16360 for Versant 80 ՝ OHCF 4000 թերթ տարողությամբ նախատեսված 182x210մմ-ից մինչև 330x488 մմ չափսի 52 գմք սովորական 106 գմք կավճապատից մինչև 350 գմք թուղթ մատակարարելու համար, High Capacity Stacker 450S02868 շարժական սայլակով HCS 5000 թերթ տարողությամբ տպագրած էջերի դարսելու համար: Մեկ ամսյա առավելագույն ծավալը 460000 թերթ: Տպագրման արագությունը A4 52-220 գմք 80 էջ/ր,A4 221-350 գմք - 60 էջ/ր, A3 52-220 գմք -44 էջ/ր, 221-350 գմք - 32 էջ/ր: Մեկ տարվա երաշխիքային ժամկետ:

13.	Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/ Xerox WC5021	Լազերային բազմաֆունկցիոնալ սարք Xerox WC 5021V_B, ձևաչափ A3, Laser, տպման արագությունը 20 էջ/րոպե, P/C/S, Platten cover, 250+100 sheets input, 300MHz, 128MB, GDI, USB 2.0: : Մեկամսյա ռեսուրսը մինչև 25000 էջ: Առաջին էջի ելքը As fast as 7.5 seconds: Պատճենահանող մեքենան հագեցած է Smart drum unit (առագ , օգտվողի ուժերով փողարինվող թմբուկի հանգույց):Պատճենման լուծաչափը (խտությունը) 600x600 dpi: Մեկ տարվա երաշխիքային ժամկետ:
14.	Բրոշյուրակար մեքենա Reco BLM4 Bookletmaker	Բրոշյուրակար մեքենա Reco Bookletmaker BLM 4 , automatic folding and stapling,saddle and flat stapling: Էլեկտրական, նախատեսված մեջկարով և վրակարով բրոշյուրներ (բուկլետներ) պատրաստելու համար, թերթերի կարելու հնարավորությունը՝ (Saddle stapling) 16 թերթ 70գ. 14 թերթ - 80գ., (Flat stapling) 22 թերթ 70գ, 20 թերթ 80գ., Կարվող թղթի նվազագույն ֆորմատը՝ A6, կարվող թղթի առավելագույն ֆորմատը՝ A3+, կարման արագությունը՝ 800 ասեղ/ժամ: Կարող գլխինկերը 2 տեսակ՝ սովորական ասեղի համար և կորությամբ ասեղի համար: հոսանքից ստացվող սնուցումը՝ 220-230 վոլտ, 50-60 հերց:
15.	Գիլյոտին Ideal 4300	Գիլյոտին Ideal 4300 , cutting width 430mm, cutting height 20mm,clamping - manual, blade drive - manual, backgauge - manual: Մեխանիկական գիյոտին նախատեսված թուղթ կտրելու համար, կտրման երկատությունը՝ 430մմ, կտրվող թղթի տրցակի բարձրությունը՝ 20մմ, սեղանի խորությունը՝ 340մմ, կտրման նվազագույն չափը՝ 36մմ, դանակի գործածումը՝ ձեռքով, տրցակի սեղմումը լծակի միջոցով
16.	Կազմարարական սարք RECO PB 6	Կազմարարական սարք RECO PB 6 combined manually operated punching and binding machine, for plastic combs: Մ 6 - 52 mm, punches up to 25 sheets* per cycle, binds up to 470 sheets* (47 mm), F variable margin depth, selectable punching pins: Նախատեսված է Ա4 ձևաչափի թղթի դակման և պլաստիկ զսպանակով կազմելու համար/ ormat: A4 - (open on the side for bigger formats) - 21 rings A4,/ առավելագույն միաժամանակյա թերթերի դակման հնարավորությունը՝ 25 թերթ 70/80 գ/քմ, առավելագույն թերթերի քանակը կազմելիս՝ 280 թերթ 70/80 գ/քմ, A4 թղթի 23 օղակով մետաղյա զսպանակ կազմելու համար, կիրառվող մետաղյա զսպանակի դրամագիծը՝ 6,4-ից 32 մմ, կարող անցքի չափը՝ 6x6 մմ, էջի սահմանի խորության կարգավորմամբ, ծակող ասեղների կարգավորմամբ:
17.	Լամինացման սարք Reco Lam 221	Լամինացման սարք Recosystems Reco-Lam 221, A4, 230mm, 2 x 75 - 2 x 125 mic: Նախատեսված է մինչև A4- 230 մմ ձևաչափի թղթի լամինացման համար, լամինացման թաղանթը՝ 2x75-2x128 միկրոն, տաք և սառը լամինացիայի, թղթի առավելագույն հաստությունը՝ 1 մմ, աշխատանքի առավելագույն արագությունը՝ 250 մմ/րոպե, տաքացման ժամանակը՝ 3-5 րոպե, ջերմաստիճանի կարգավորումը 3 քայլով, խցանված թղթի դուրս բերման հնարավորությամբ, 2 ցուցալույսով, 2 գլանով, սնուցումը՝ 220-230 վոլտ, 50-60 հերց:

Ծանոթություն՝ -Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ՀՀ ՊՆ տարածք:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Հ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-8/7-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Մատակարարումը՝ 2016թ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ	Ընդամենը քանակ
1.	Տոներ սև 006R01646 K	հատ	42,500	127,500	3	3
2.	Տոներ կապույտ 006R01647 C	հատ	50,000	150,000	3	3
3.	Տոներ կարմիր 006R01648 M	հատ	50,000	150,000	3	3
4.	Տոներ դեղին 006R01649 Y	հատ	50,000	150,000	3	3
5.	Թմբուկ 013R00674 Drum Module	հատ	90,000	270,000	3	3
6.	Օգտագործված փոշու տարա 008R12990	հատ	11,000	33,000	3	3
7.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT BELT KIT 675K72180	հատ	86,500	86,500	1	1
8.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս 1ST BTR ROLL 059K32492	հատ	26,700	106,800	4	4
9.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT ASSEMBLY 042K92759	հատ	135,410	135,410	1	1
10.	Տոներ WC 5890C 006R01551	հատ	70,000	280,000	4	4
11.	Ֆյուզերի հանգույց (DC 252) 008R12989	հատ	502,650	502,650	1	1
12.	Գունավոր պատ. Սարք/ Xerox Versant 80 լրակազմով/	հատ	21,800,000	21,800,000	1	1
13.	Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/ Xerox WC5021	հատ	328,000	6,888,000	21	21
14.	Բրոշյուրակար մեքենա Reco BLM4 Bookletmaker	հատ	1,250,000	1,250,000	1	1
15.	Գիլյոտին Ideal 4300	հատ	455,190	455,190	1	1
16.	Կազմարարական սարք RECO PB 6	հատ	192,000	384,000	2	2
17.	Լամինացման սարք Reco Lam 221	հատ	45,000	45,000	1	1
	Ընդամենը			**32,814,050**		

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ
տնօրեն

Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-8/7-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ., այդ թվում՝ Դեկտեմբեր
1.	Տոներ սև 006R01646 K	30121460/32/4/2	127,500	127,500
2.	Տոներ կապույտ 006R01647 C	30121460/33/4/2	150,000	150,000
3.	Տոներ կարմիր 006R01648 M	30121460/34/4/2	150,000	150,000
4.	Տոներ դեղին 006R01649 Y	30121460/35/4/2	150,000	150,000
5.	Թմբուկ 013R00674 Drum Module	30121450/23/4/2	270,000	270,000
6.	Օգտագործված փոշու տարա 008R12990	30121450/24/4/2	33,000	33,000
7.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT BELT KIT 675K72180	30121450/25/4/2	86,500	86,500
8.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս 1ST BTR ROLL 059K32492	30121450/26/4/2	106,800	106,800
9.	DC 252 պատճենանման մեքենայի պահեստամաս IBT ASSEMBLY 042K92759	30121450/27/4/2	135,410	135,410
10.	Տոներ WC 5890C 006R01551	30121480/5/4/2	280,000	280,000
11.	Ֆյուզերի հանգույց (DC 252) 008R12989	30121450/22/4/2	502,650	502,650
12.	Գունավոր պատ. Սարք/ Xerox Versant 80 լրակազմով/	30121210/3/4/2	21,800,000	21,800,000
13.	Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, /տպիչ, պատճեն, սկան/ Xerox WC5021	30121210/4/4/2	6,888,000	6,888,000
14.	Բրոշյուրակար մեքենա Reco BLM4 Bookletmaker	30121210/5/4/2	1,250,000	1,250,000
15.	Գիլոտին Ideal 4300	30121210/6/4/2	455,190	455,190
16.	Կազմարարական սարք RECO PB 6	30121210/7/4/2	384,000	384,000
17.	Լամինացման սարք Reco Lam 221	30121210/8/4/2	45,000	45,000
	Ընդամենը		32,814,050	32,814,050

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի
տնօրեն

Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-8/7-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-8/7-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. --------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն